Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

2015թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության

հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2015թ. գործունեության կարևոր արդյունքներից** կարելի է առանձնացնել հետևյալը.

ա) Հրատարակվել են կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 18-րդ հատորը՝ /228 էջ/ և «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարի 2-րդ պրակը՝ 203 էջ ծավալով:

բ) Մայիսի 17-18-ին Կենտրոնը կազմակերպել է «Հիշում եմ և պահանջում» խորագրով մարզային ընթերցումներ՝մարզի ավագ դպրոցների ավարտական դասարանի 130 աշակերտների մասնակցությամբ՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին:

գ) Հուլիսի 20-30-ը ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ կազմակերպել է երիտասարդ պատմաբանների հանրապետական դպրոց «Հայոց ցեղասպանության ճանաչման և պատմական իրավունքի վերականգնման հիմնահարցեր» խորագրով՝ հանրապետության ԳԱԱ համակարգի, բուհերի 30 երիտասարդ մագիստրոսների, ասպիրանտների, գիտթեկնածուների, պատմության ուսուցիչների մասնակցությամբ /ղեկ.՝պ.գ.թ. Կ.Ալեքսանյան/:

դ). Սեպտեմբերին ՀՀ Մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ Կենտրոնը Գյումրիում անցկացրել է «Հացի տոն» երրորդ ազգագրական փառատոնը՝ հանրապետության բոլոր մարզերի և ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ /ղեկ.՝ հ.գ.թ. Կ.Սահակյան/:

ե) Կենտրոնի հնագետների կողմից Շիրակի մարզում հայտնաբերվել և հետախուզվել են 2 նոր հնավայրեր. վաղբրոնզիդարյան բնակավայր և դամբարանադաշտ Եղնաջուր համայնքի տարածքում և վաղերկաթիդարյան դամբարանադաշտեր Ջրաձորում /ղեկ.՝ պ.գ.թ. Լ.Եգանյան/:

2. **Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2015թ.**

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2015թ. շարունակել է իրականացնել «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագիրը`(ղեկ.`բ.գ.դ.Ս.Հայրապետյան):

---- Էթնոհոգեբանական հետազոտությունների ոլորտում շարունակվել է տոների ու տոնահանդեսների մշակույթի ուսումնասիրությունը: Այն ուղեկցվեց 2015-ի սեպտեմբերին «Հացի տոն» երրորդ փառատոնի անցկացմամբ, որն արդեն ավանդական է դարձել Գյումրիում և լավագույնս է ներկայացնում տոնի ժամանակակից դրսևորումներն ու մեկնաբանությունը՝ հնարավորություն ընձեռելով ուսումնասիրողներին այդ համատեքստում բացահայտել նաև անձի վրա միջմշակութային արժեքների հոգեբանական ազդեցությունը (համակարգող՝ հ.գ.թ. Կ.Սահակյան): Ազգահոգեբանների խումբը 2015-ին հրատարակել է 1մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ և 2 գիտական հոդված:

Հայկական ավանդական արհեստների հետազոտության ոլորտում, կապված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի հետ, ուսումնասիրվել և ներկայացվել է արհեստների ու տնայնագործության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում մինչև Եղեռնը, կոտորածների ժամանակ և դրանցից հետո /ղեկ.՝ պ.գ.թ. Կ.Բազեյան/: Այս թեմայի շուրջ խումբը 4 զեկույցներով /2-ը 2015-ին տպագրվել են արտերկրում/ հանդես է եկել միջազգային գիտաժողովներում /Բուլղարիա, ՌԴ, Հայաստան/, հրատարակել 1 մենագրություն և 2 հոդվածներ:

Էթնոարվեստաբանության ոլորտում 2015-ին բանահավաքչական արշավախումբը աշխատել է Շիրակի մարզի 20 համայնքներում, Չարենցի անվան ԳԱԹ-ում՝ այդ ընթացքում հավաքելով ու նոտագրելով շուրջ 100 ժողովրդական երգեր, որոնք արժեքավոր վկայություններ են 1915-ին Մուշից ու Ալաշկերտից գաղթած մեր հայրենակիցների երգային ավանդույթների մասին /ղեկ.՝ արվ.գ.թ. Հ.Հարությունյան/: Նյութերը պատրաստվում են հրատարակման«Ժողովրդական երգը որպես փրկված մշակույթ» ժողովածուով: Խումբը հաշվետու տարում զեկուցումներով հանդես է եկել 2 միջազգային գիտաժողովներում, հրատարակել է 1 գիտական հոդված և հանրապետական գիտաժողովի 1 հաղորդում:

2015-ին ՀՀ ազգային պատկերասրահի, ԳԱԹ-ի, ազգային արխիվի, թանգարանների, պատկերասրահների ու մասնավոր հավաքածուների հետ

համագործակցությամբ շարունակվել է Գյումրու գեղարվեստի պատմության ուսումնասիրությունը /մ.գ.թ. Լ.Աթանեսյան/, հրատարակվել է 1 մենագրություն:

Էթնոլեզվագիտության ոլորտում /ղեկ.՝ բ.գ.դ. Ս.Հայրապետյան/ 2015-ին առանձնակի ուշադրություն է դարձվել արդի միգրացիոն ժողովրդագրական գործընթացներին ու տնտեսական-քաղաքական գործոններին, որոնք իրենց կնիքն են դրել Գյումրու խոսվածքի արդի փոխակերպումների վրա: Շարունակվել է նաև ժողովրդական բանահյուսության նմուշների համեմատական վերլուծություն/Հ.Մատիկյան/: Արված աշխատանքն ամփոփված է միջազգային գիտաժողովի 1 հաղորդման մեջ և 1 հրատարակված հոդվածում:

---- 2015թ. Կենտրոնի հնագետների խումբը /ղեկավար՝ պ.գ.թ. Լ.Եգանյան/ շարունակել է Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան հնագիտական հուշարձանի պլանային պեղումները /հուլիս/, իսկ հայ-գերմանական միացյալ արշավախմբի կազմում մասնակցել է Ազատանի մ.թ.ա. 9-8-րդ դարերի ամրոց-բնակավայրի և դամբարանադաշտերի պեղումներին /օգոստոս/: Տարվա առաջին կեսը տրամադրվել է նախորդ տարվա պեղումներով վերոնշյալ հնավայրերից հայտնաբերված նյութերի կամերալ ուսումնասիրությանն ու վերականգնողական աշխատանքին: Խումբը 2 գիտական հաղորդումներով հանդես է եկել երկու միջազգային /Ֆրանսիա/ և 1 հանրապետական /Երևան/ գիտաժողովներում, հրատարակել երեք հոդված Կենտրոնի ժողովածուի 18-րդ հատորում: Հաշվետու տարում խմբի կողմից Շիրակի մարզի տարածքում հայտնաբերվել են նաև 2 նոր հնավայրեր:

----- «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություն-2» ծրագրի շրջանակներում 2015-ին շարունակվել է հայոց պատմության համատեքստում պատմական գավառի հնագույն, հին և նոր շրջանների պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Մասնավորապես, հայկական և այլ «իծագրեր» ժայռապատկերների մանրազնին համեմատական ուսումնասիրությունը /ղեկ.՝պ.գ.դ. Ս.Պետրոսյան/ թույլ է տվել քարի վրա կատարված այդ փորագրությունները դիտել որպես հնդեվրոպական ժողովուրդների գրի նախնական ձև, որից աստիճանաբար անցում է կատարվել դեպի մեհենագրություն: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են 2015-ին հրատարակված 2 գիտական հոդվածներում:

Ավարտվել և հրատարակության է նախապատրաստվել «Էրիախի երկիրը մ.թ.ա. VIII-VI դդ.» մենագրությունը՝ նվիրված պատմական Շիրակի ազգագավառներից մեկի պատմությանը: Հրատարակվել է «Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում» համահավաքը /«Էլդորադո» հրատ.,77 էջ/:

2015-ին Կենտրոնում շարունակվել է Շիրակին հարակից Տայքի ազգային պատկանելության, վարչաժողովրդագրական և տեղագրական խնդիրների ուսումնասիրությունը: Այդ նպատակով մարտ ամսին կազմակերպվել է գիտաշխատողի այցելություն Տայք՝ ծանոթանալու հայ քաղկեդոնական հուշարձանների ներկա վիճակին, և միայն տարածաշրջանում առկա լարվածության պատճառով հնարավոր չեղավ ավարտին հասցնելու հետազոտության այդ մասը /ղեկ.՝ պ.գ.թ.Ա.Ակոպով/: Խնդրո առարկա հարցերի մեկնաբանությունը կատարվել է 2015-ին հրատարակված 1 հոդվածով և միջազգային գիտաժողովի 1 տպագրված զեկույցով:

Հաշվետու տարում ուսումնասիրվել է Մեծ եղեռնի իրադարձությունները լուսաբանող արևելահայ մամուլը /«Գաւառի ձայն», «Աշխատանք», «Հորիզոն», «Համբաւաբեր», «Արև», «Մշակ» կամ «Армянский Вестник»/, որում անչափ կարևոր հաղորդումներ ի հայտ եկան ինչպես Երևանի նահանգի տարբեր գավառներում հաստատված փախստական-գաղթականների թվի, էթնոկոնֆեսիոնալ կազմի, ըստ բնակության նոր վայրերի նրանց տեղաբաշխման, այնպես էլ գաղթականության ընդունման ժամանակ առաջացած խնդիրների, հասարակական կազմակերպությունների հիվանդախնամ և որբախնամ գործունեության և գաղթականության շրջանում կրթական գործի կազմակերպման մասին/ղեկ.՝ պ.գ.թ.Ա.Հայրապետյան/: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են 2015-ին հրատարակված 2 հոդվածներում, որոնցից մեկը՝ «Բեյրութի Հայկազեան Հանդէս»-ում, միջազգային գիտաժողովի 1 հրատարակված հաղորդման մեջ:

Շարունակվել է նաև Ալեքսանդրապոլի գավառի քաղաքական կյանքի, մասնավորապես Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Ալեքսանդրապոլի տեղական ինքնակառավարման մարմինների և կենտրոնական իշխանությունների բարդ փոխհարաբերությունների, մայիսյան իրադարձությունների նորովի մեկնաբանումը /պ.գ.թ. Կ.Ալեքսանյան/: Արդյունքները ներկայացված են 2015-ին հրատարակված 4 հոդվածով և միջազգային գիտաժողովի տպագրված 1 զեկույցով:

---- 2015-ի հուլիսի 20-30-ը ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ Կենտրոնը մեծ հաջողությամբ գումարեց երիտասարդ պատմաբանների տասնօրյա հանրապետական դպրոց «Հայոց ցեղասպանության ճանաչման և պատմական իրավունքի վերականգնման հիմնահարցեր» խորագրով, որի ունկնդիրները եղան հանրապետության ԳԱԱ համակարգի, բուհերի 30 երիտասարդ մագիստրոսներ, ասպիրանտներ, գիտթեկնածուներ, պատմության ուսուցիչներ: Նյութերը հրատարակման փուլում են:

Մեծ եղեռնի 100-ամյակի տարելիցի առիթով Կենտրոնում 2015-ին նկարահանվել է փաստավավերագրական ֆիլմ «Մոխրացած ոսկորներից կորզված ոսկին» խորագրով՝ ըստ վերապրածների և նրանց հետնորդների հիշողությունների: Շարունակվել է Մեծ եղեռնը վերապրածների հետնորդների հիշողությունների հավաքումն ու մեկնաբանումը, որին նվիրվել են հրատարակված 3 աշխատանքներ՝ 1 մենագրություն /հուշագրություն/, միջազգային գիտաժողովի 1 զեկույց և 1 հոդված Կենտրոնի պարբերական ժողովածուում /Ի.Ավագյան/:

2015-ի մայիսին Կենտրոնը Գյումրիում կազմակերպեց «Հիշում եմ և պահանջում» խորագրով մարզային ընթերցումներ՝ մարզի ավագ դպրոցների ավարտական դասարանի 130 աշակերտների մասնակցությամբ՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին:

3. **Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2015թ**.

2015-ի սեպտեմբեր ամսից ՇՀՀ կենտրոնում իրականացվում են նաև թեմատիկ ֆինանսավորմամբ երկու եռամյա ծրագրեր. «Կարս-Ալեքսանդրապոլ. աշուղական ավանդույթներ և փոխառնչություններ» /ղեկ.՝ արվ. թ. Հ.Հարությունյան/ և «Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցները» /ղեկ.՝ պ.գ.թ. Լ.Եգանյան/: Առաջինի գծով սկսվել են հավաքչական աշխատանքներ Կարսի հայ աշուղներին վերաբերող նյութերի հայտնաբերման և համակարգման ուղղությամբ: Երկրորդ թեմայի շրջանակներում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հետախուզական պեղումներ են իրականացվել Ջրափիի և Փոքր Սեպասարի ամրոց հնավայրերում:

4.-

5. 2015թ. հրապարակումների ցանկը

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Ավագյան Ի.Է., «Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում», Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2015, 77 էջ
2. Ավագյան Ի.Է., Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից, «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշար, պր. 4, Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2015, 120 էջ:
3. «Գիտական աշխատություններ» ՀՀ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի պարբերական ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2015, հատոր 18, 228 էջ:
4. Հովհաննիսյան Ռ.Պ., Սահակյան Կ., Հացի փառատոն Գյումրիում /30-ը հոկտեմբերի, 2015/, Գյումրի, 2015, 32 էջ:
5. «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշար, Երևան-Գյումրի, «Գիտություն» հրատ., 2015, պրակ 2, 203 էջ:

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Սահակյան Կ.Ա., Քաղաքական հոգեբանության ուրվագծեր, Գյումրի, «Էլդորադո» հրատ, 2015, 180 էջ:

Հոդվածներ, զեկուցումներ

1. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցումները Արտաքին գործերի նախարարին՝ ներկայացուցչության գործունեության և Ալեքսանդրապոլի գավառի դրության վերաբերյալ (1918թ.սեպտեմբեր-դեկտեմբեր), Եր., «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, 2015, էջ 112-119:
2. Ալեքսանյան Կ.Վ., Աշակերտական ընթերցումներ. Հիշում եմ և պահանջում, Եր., «Հայագիտությունը դպրոցում», 2015, N 3, էջ 59-61:
3. Ալեքսանյան Կ.Վ., Թուրք-հայկական հարաբերությունները Ալեքսանդրապոլի գավառի բռնազավթման շրջանում 1918-1921թթ., Պեյրութ, «Հայկազեան Հայագիտական հանդէս», հ.ԼԵ, 2015, էջ 293-326:
4. Ալեքսանյան Կ.Վ., Մայիսյան իրադարձություններին վերաբերող մի փաստաթղթի հետքերով, Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերական ժողովածու, Գյումրի, հ.18, 2015թ., էջ 230-236:

5. Ավագյան Ի.Է., Շիրակից հայտնի ուրարտական դարաշրջանի գոտիների զարդա-մոտիվների շուրջ, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015թ., էջ 70-82:
6. Բազեյան Կ.Ռ., Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմազգագրական ուսումնասիրություն), Եր., «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ», պր. 2, «Գիտություն» հրատ., 2015թ., համահեղինակ՝ Գ.Թ Աղանյան, էջ 7-117:
7. Բազեյան Կ.Ռ., Արհեստները՝ Ցեղասպանության համատեքստում, Գյումրի, «Գի-տական աշխատություններ», հ.18, 2015թ., էջ 132-138:
8. Բազեյան Կ.Ռ., Ժողովրդական արվեստի դերն ու նշանակությունը մշակութային ժառանգության պահպանման համատեքստում, Եր., «Պատմամշակութային ժա-ռանգություն» գիտատեղեկատվական հոդվածների ժողովածու, պր.1, 2015, էջ 159-166:
9. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի բուսաբուծությունը 1920-1930-ական թվականներին, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015թ., էջ 237-245:
10. Եգանյան Լ.Գ., Մեծ Սեպասարի եռոտանի և քառոտանի զոհասեղանները, Գյում-րի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015թ., էջ 23-31:
11. Խաչատրյան Հ.Հ, Եգանյան Լ.Գ., Պետրոսյան Լ.Ա., Ազատանի դամբարանադաշտի 2014թ. պեղումները, Գյումրի,«Գիտական աշխատություններ» հ.18, 2015թ., էջ 32-50:
12. Հայրապետեան Ա.Ս., Առաջին աշխարհամարտը և Ալեքսանդրապոլի գաւառ հաստատուած գաղթականութեան թուաքանակը, Պէյրութ, «Հայկազեան Հայագի-տական հանդէս», հատոր ԼԵ, 2015, էջ 249-272:
13. Հայրապետյան Ա.Ս., Արևելահայ մամուլն առաջին աշխարհամարտի տարիներին Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության մասին, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ. 18, 2015, էջ 110-120:
14. Հարությունյան Հ.Հ, Շիրակի երաժշտական բանահյուսության արդի դրսևորում-ները, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 139-145:

15. Հարությունյան Հ.Հ., Տաթևի համալսարանը որպես հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության կենտրոն, Եր., «Տաթևի համալսարանը որպես գիտական, կրթական կենտրոն» հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015, էջ 45-52:
16. Հովհաննիսյան Ռ.Պ., Հայի ոգու հետեղեռնյան կենսաշարժը Հակոբ Հարությունի «Կապույտ հազ» գրքում, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 165-169:
17. Մատիկյան Հ.Հ., Child/երեխա բաղադրիչները բառային բարդություններում, Եր. ՀՊՏՀ 24-րդ գիտաժողով «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ», «Տնտեսագետ» հրատ., 2015, էջ 169-172:
18. Մատիկյան Հ.Հ., Օրորասացի կերպարը անգլալեզու եվ հայ բանահյուսական օրորոցային տեքստերում, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 204-209:
19. Պետրոսյան Լ., Մի մանրանկարի նորովի մեկնաբանման փորձ, «Գիտական աշխատություններ», հ.18, Գյումրի, 2015, էջ 62-69:
20. Պետրոսյան Ս.Գ., «Իծագրեր»-ժայռապատկերները քարայծի և դիցայծի պաշտամունքի տեսանկյունից, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 83-96:
21. Պետրոսյան Ս., Quria երկրները և հին հայոց մատռվակները, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 51-61:
22. Սահակյան Կ.Ա., Ցեղասպանություն. երրորդ սերունդ /Ա.Արսլանի վեպերի հիման վրա, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 178-181:
23. Худавердян А.Ю., Хачатрян А. А., Еганян Л.Г., Петросян Л.А., Антропологические материалы из погребений куро-араксской культуры с территории Ширака, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 5-22:
24. Aghanyan G.T., **Bazeyan K.R.**, The town as a barear of innovation values (on the example of town Alexandrapole), Tbilisi, Archeion, N 10, 2015, p. 46
25. Akopov A.A. The principality of Tayk in the geopolitical processes in South Caucasus (The second part of the X century), Գյումրի, «Գիտական աշխատություններ», հ.18, 2015, էջ 104-109:

Հոդվածները հրատարակվել են «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը /պատմություն և արդիականություն/» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Եր. «Գիտություն» հրատ., 2015, 304 էջ:

1. Ալեքսանյան Կ.Վ., Հասարակական կառույցների օժանդակությունը Ալեքսանդրա-պոլի գավառում ապաստանած արևմտահայ գաղթականներին 1914-1918թթ.,էջ 86-97:
2. Ավագյան Ի.Է., Մեր գնդի նահանջը (Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը), էջ 65-75:
3. Հայրապետյան Ա.Ս., Արևմտահայ գաղթականությունն Ալեքսանդրապոլի գավառում 1914-1918թթ., էջ 76-85:

Հոդվածները հրատարակվել են Emigrants and minorities: The silenced memory of the Russo-Ottoman war 1877-78, Blagoevgrad, “Balkanistic Forum”, № 3, 2015.

1. Aghanyan G.T., **Bazeyan K. R.,** National Minorities of Armenia during the Russo-Ottoman War of 1877 – 1878, p.108-117.
2. Алексанян К.В., Организация образовательного процесса западноармянских сирот в Александропольском уезде (1915-1922), с. 69 -79.

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Տնօրեն՝ բ. գ. դ. Ս. Ա. Հայրապետյան,
Գիտքարտուղար՝ արվ. թ. Հ. Հ. Հարությունյան,
Էլեկտրոնային փոստ՝ hkentron@mail.ru
Կայքէջ՝ www shirakcenter.sci.am

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ

ա/ -

բ/ 2

գ/ մինչև 35՝ 5, 35-ից մնչև 60՝ 9, 60 և ավելի տարիքի՝ 6

8.-

9.-

10. ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, Բեյրութի Հայկազեան համալսարանի, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ԳՊՄԻ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Հայաստանի պատմության ազգային, Հ. Շարամբեյանի անվան ժող. արվեստի, Գյումրու երկրագիտական եւ ժող. Ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների,

ԳԱԹ-ի եւ այլ պետական ու հասարակական կազմակերպություններիհետ: Համա-տեղողների թիվը՝ 8 /ԳՊՄԻ՝ 7, ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների պահպանության ծառայություն՝ 1 /:

2015թ. համատեղ 8 հրապարակումներ են եղել Պատմության ինստիտուտի/2/, Արվեստի ինստիտուտի/1/, Հ.Շարամբեյանի անվ. թանգարանի/1/, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի /2/, Հալեի համալսարանի գերմանական հնագիտական արշավախմբի /2/ հետ:

11. -

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝	Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
գիտքարտուղար՝	Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աղյուսակ 1 -

Աղյուսակ 2

2015թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային	Թեմատիկ	Տնտ. Պայմանագրեր
1	«Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ		27128.1	2825.0	

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում՝ արտերկրից
1	2	3	4	5
1	Հանրապետական գիտական ընթերցումներ նվիրված՝ Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին	Գյումրի, 20 ապրիլի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԳԱԱ Պատմության ինստիտուտ, ԳՊՄԻ	8	1
2	Հանրապետական աշակերտական ընթերցումներ. «Հիշում եմ և պահանջում»	Գյումրի, 17-18 մայիսի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Շիրակի մարզպետարան	120	6
3	Երիտասարդ պատմաբանների հանրապետական տասնօրյա ամառային դպրոց՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման և պատմական իրավունքի վերականգնման հիմնահարցեր»	Գյումրի, 20-30 հուլիսի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ՀՀ ԿԳՆ գիտպետկոմիտե	30	4
4	«Հացի տոն» քաղաքային երրորդ փառատոն	Գյումրի, 5 սեպտեմբերի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Գյումրու քաղաքապետարան ՀՀ մշակ. նախարարություն	90	12

- **Աղյուսակ 4**

Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումները

№	Կազմակերպու-թյունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտա-կան աշխատանք կատարելու	Բանակցություն-ների և քննար-կումների համար
1	2	3	4	5	6
	ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	Բուլղարիա	2		

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

N	Կազմակերպու-Թյունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողով-ներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցութ-յունների և խորհրդաժու-թյունների
1	2	3	4	5	6
1	«Շիրակի հայա-գիտական հե-տազոտություններ ի կենտրոն» ՊՈԱԿ	Վրաստան, Ուկրաինա, ՌԴ, Ֆրանսիա, Գերմանիա,	2 4 3	1 3 4 3	1

Աղյուսակ 6 -

Աղյուսակ 7

Կազմակերպության 2015թ. Ֆինասավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				Արտար-ժույթ ($,€, руб.)	Արժույթի կուրսը	Դրամ
1	2	3	4	5	6	7

	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	35.633.1				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2015թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումն. ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4		5			6	7
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	5	-	1	-	25	5	15	4

Աղյուսակ 9 -

Աղյուսակ 10 -

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2016թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների թիվը	ԳԱԱ ակադեմի-Կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	23	19			2	11

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ